ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 սեպտեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

126
(2606)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՄ 86

Նիկոլ Փաշինյանը բարեկամներին աշխատանքի տեղավորելու առիթով 2018 թվականի ապրիլի 8-ի ասել էր. «Կա «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, եւ մենք ամեն ինչ անելու ենք, որ ամեն մի իշխանություն չգա ու իր բաջանաղին չմտցնի պետական կառավարման համակարգ: Հիմա հարց. այս խոստումը կատարվե՞լ է. այո՛, լիարժեք, 100 տոկոսով կատարվել է»: Այդուհանդերձ, «նոր» Հայաստանում խնամի-ծանոթ-բարեկամներին աշխատանքի տեղավորելու երեւույթը ոչ միայն արմատախիլ չարվեց, այլեւ շարունակվում է առավել ամբարտավան դրսեւորումներով: Խոսենք փաստերով. վարչապետի տիկին Աննա Հակոբյանի եղբայրը՝ Հաչյա Հակոբյանը, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր է: Լենա Նազարյան եւ Նարեկ Բաբայան. նրանք ամուսիններով ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավորներ են: ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի կինը՝ Ռուզաննա Տոնոյանը, աշխատում է ամուսնու ղեկավարած նախարարությունում: Խնամի-ծանոթ-բարեկամ մերժող հեղափոխական իշխանության օրոք ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի կինը՝ Մանե Մինասյանը, աշխատում է ՀՀ հաշվեքննիչ պալատում. մամուլի քարտուղարն է: ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Հռիփսիմե Գրիգորյանի ամուսինը ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի խորհրդական Դավիթ Կարապետյանն է: Բացի այդ, բաջանաղներին մերժած Նիկոլ Փաշինյանն ուժային կառույցների ղեկավարներ նշանակեց իր դասընկերներին եւ հայրենակիցներին. ՀՀ ոստիկանության ծառայության պետը իջեւանցի Վահե Ղազարյանն է, ԱԺ պատգամավոր, խորհրդարանի Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը Փաշինյանի մանկության ընկեր Վահե Ղալումյանն է, Իջեւանի քաղաքապետի պաշտոնակատարը Փաշինյանի հարսանիքի քավոր Հայկ Ղալումյանն է, եւ այսպես շարունակ: Ցանկը, իհարկե, ավելի երկար է, որին առաջիկայում կանդրադառնանք: Մինչ այդ արձանագրենք, որ մերժելով հին բարքերը՝ հեղափոխական իշխանությունը հենց հին, մերժված մտածողությամբ է առաջ շարժվում՝ խաբելով ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

«Ոլորտը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը ոչ միայն պետությանն է խաբում, այլեւ մարդկանց: Նախորդ համարում «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ վերջինս պետությանը խաբել է՝ներկայացնելով կեղծ փաստաթղթեր: Պարզվում է՝ նա ֆինանսական հարցերում էլ խաբելու վարպետ է, եւ շատ դեպքերում դատարանով են մարդիկ Արզաքանցյանից գումար հետ ստացել: «Ժողովուրդ» օրաթերթը արխիվի ուսումնասիրությամբ պարզեց, որ 2014-ի մայիսին Կենտրոն եւ Նորք-Մարաշ դատարանը որոշում է կայացրել Տիգրան Արզաքանցյանից հօգուտ Անդրեյ Սիչի բռնագանձել 308 հազար 375 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից 204 հազար 392 ԱՄՆ դոլարը՝ որպես փոխառության գումար, իսկ 103 հազար 983 ԱՄՆ դոլարը՝ փոխառության գումարը սահմանված ժամկետում չվերադարձնելու համար հաշվարկված տույժ:Ըստ դատական գործի՝ Անդրեյ Սիչի եւ Տիգրան Արզաքանցյանի միջեւ 2012-ի հոկտեմբերին կնքվել է փոխառության պայմանագիր, որով Սիչն Արզաքանցյանին է հանձնել 280 հազար ԱՄՆ դոլար: Ամբողջ գումարը՝ երեք մասով, Արզաքանցյանը պարտավորվել է Սիչին հանձնել ամենաուշը 2013 թվականի հունվարի 31-ին՝ պարտավորվելով հակառակ դեպքում փոխատուին վճարել տույժ՝ 0.15%-ի չափով: Արզաքանցյանը մինչեւ 2013 թվականի մարտ ամիսը կանխիկ եւ բանկային հաշվին փոխանցելու միջոցով գործընկերոջը վերադարձրել է ընդամենը 75 հազար 608 դոլար՝ պարտք մնալով 204 հազար 392 ԱՄՆ դոլար: Արդեն 2013 թվականի նոյեմբեր ամսին Սիչը հաշվարկել է տույժը եւ Արզաքանցյանին ներկայացրել եւս 103 հազար 983 դոլարի պարտավորություն: Այս պահանջից հետո դատարանում որեւէ գործողություն չի ձեռնարկել Նիկոլ Փաշինյանի մոտ այսօր ընդդիմություն աշխատող Արզաքանցյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս օրերին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն հարցաքննության են հրավիրում Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավորներին: Մեզ հասած տեղեկություններով՝ իրավապահները պատգամավորներին հարցաքննության են հրավիրում 2022 թվականի մայիսից մեկնարկած «Դիմադրություն» շարժման բողոքի ակցիաների ժամանակ գրանցված բռնության դեպքերի մասով: Դրանց մասով քրեական վարույթ է հարուցվել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածով, որ վերաբերում է բռնություն գործադրելով պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ այս եւ այլ գործերով Քննչական կոմիտե հարցաքննության են հրավիրվել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադեւոս Ավետիսյանը, Արծվիկ Մինասյանը, Գեղամ Մանուկյանը եւ այլք: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի հետ: Նա հաստատեց մեր տեղեկությունն ու հավելեց, որ դեպքը մայիսի 30-ին է տեղի ունեցել կառավարության երրորդ մասնաշենքի մոտ: «Խոսքը ոստիկանական աննախադեպ բռնության մասին է, ինչի հետեւանքով հունիս ամսին Քննչական կոմիտեն ինձ հարցաքննության կամ բացատրության էր հրավիրել, որտեղ մանրամասն ներկայացրել եմ այն, ինչ տեղի է ունեցել: Ցավոք սրտի, Քննչական կոմիտեն, Նիկոլի պատվերները կատարելով, շատ արագ ու փութաջանորեն քրեական գործեր է հարուցում, իսկ այս դեպքում հանցավոր դանդաղկոտություն է ցուցաբերում: Առաջին բացատրության ժամանակ ՔԿ-ին տեսանյութեր եմ ներկայացրել, որտեղ «Նիկոլի վկա» կարմիր բերետավորները վայրենի պահվածք են դրսեւորել, բայց դրանից հետո որեւէ իրավական գործընթաց տեղի չի ունենում: Այլ գործընկերների էլ են հրավիրել: ՔԿ-ն այդ առումով հիմա քիչ փութաջանություն է ցուցաբերում, թեեւ Արգիշտի Քյարամյանը զբաղված է այլ իր համար կարեւոր գործերով»,- ամփոփեց նա: Հավելենք նաեւ՝ քանի որ ընդդիմության գործողությունների ժամանակ տեղի ունեցած հանցանքների մասով հարուցված քրգործերի մեծ մասը ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անկուսակցական նախագահ Թագուհի Թովմասյանի գրությունների հիման վրա են հարուցվել, հարցաքննության է հրավիրվել նաեւ Թովմասյանը, բայց հարցաքննությունը չի կայացել:

Գազաբալոնային համակարգի լիցենզավորված կայաններում այլեւս հերթեր չեն գոյանում. մինչեւ օգոստոսի 1-ը կայանների առաջ հարյուրավոր մեքենաների հերթեր էին: Բանն այն է, որ շատ վարորդներ հրաժարվում են ճնշափորձարկել իրենց գազաբալոնները: «Ժողովուրդ» օրաթերթը գազաբալոնային համակարգի լիցենզավորված կայաններից տեղեկացավ, որ անգամ հերթագրված վարորդներն են արդեն հրաժարվում ճնշափորձարկել: «Վարորդները պարզապես մոտենում են մեզ ու ասում են՝ մեզ հերթ տվե՛ք էլեկտրոնային համակարգում ու հնարավորինս ուշ, որ մենք կարողանանք լիցքավորել, բայց չենք ուզում ճնշափորձարկենք: Ու այդպիսի վարորդները շատ են, անգամ ազդեցություն են ունենում ճնշափորձարկած վարորդների վրա, ասում են՝ գնացե՛ք, ձեր գումարները հե՛տ ուզեք. տեսեք, մենք փող ենք տվել, բայց լիցքավորում ենք: Ու արձանագրվել են դեպքեր, երբ գալիս են եւ իրենց գումարները հետ են ուզում»,- իրավիճակը ներկայացրեց կայաններից մեկի տնօրենը: Տպավորություն է, թե գործադիրը մտահոգ է իր քաղաքացու անվտանգության խնդրով, բայց, արի ու տես, ոչ բոլոր գազալցակայաններում են վարորդներից պահանջում ցույց տալ գազաբալոնի՝ ճնշափորձարկված լինելու մասին փաստաթուղթը կամ հերթագրումը: Պարզ է մեկ բան. կառավարությունն ընդունել է մի օրենք, բայց չի մտածել դրա վերահսկման մեխանիզմների մասին, ինչպես եղավ դիմակների, քուար կոդերի եւ այլ արգելքների մասով. զրո վերահսկողություն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ Է ԶԳԱՑԵԼ

ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ՏԵՂԸ ՄԻԱՅՆ ԲԵՄՈՒՄ Է

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը վերջապես գաղտնազերծել է, թե երբ ու ինչ ձեւաչափով է հանդիպելու քաղաքացիների հետ: Քաղաքականություն մուտք գործած կատակերգու դերասանը դարձ ի շրջանս յուր է անում ու բեմ վերադառնում: Ասում է՝ քաղաքականությունից է խոսելու, ու այժմ նրա «արվեստի» երկրպագուները ուրտատրոփ սպասում են, թե Մարությանն ինչպես է մի շարք քաղաքական գործիչների դիմակը պատռելու: Հիշեցնենք, ի դեպ, որ «Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ գրել էր, որ «սուպերքաղաքապետը» իր մոնոնեերկայացման ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության այլ անդամների հետ ունեցած նամակագրությունից որոշ հատվածներ է հանրայնացնելու ձայնային հաղորդագրությունների տեսքով: Մինչեւ այլոց մասին ոչ կոռեկտ բառապաշարով արտահայտվելը, սակայն, նրա հետ աշխատած անձինք հորդորում են չմոռանալ անցած ճանապարհը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Երեւանի ավագանու «Լույս» խմբակցության անդամ Անի Խաչատրյանն ասում է, որ Մարությանը նախեւառաջ իրենց՝ ընդդիմադիրների քննադատությունը թող հիշի, իր կառավարման մասին հնչած բազում դժգոհություններն ի մի բերի, ապա նոր անվանարկի մարդկանց:

-Նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը որոշել է նախկին աշխատանքին՝ դերասանությանը վերադառնալ: Վերադարձի անդրանիկ ներկայացումը նա քաղաքական շեշտադրումներով է անելու: Որպես ավագանու անդամ, որ աշխատել է նրա հետ, ի՞նչ կասեք, նա երբեւէ հեռացե՞լ էր դերասանությունից, թե՞ անգամ քաղաքապետարանում շարունակում էր խաղալ:

-Այո՛, Հայկ Մարությանը խաղում էր քաղաքապետարանում, բայց քաղաքապետարանի դերը չստացված էր: Հիմա հույս ունեմ, որ ինքը վերադարձավ իր առաջվա գործին, որտեղ ժամանակին փառք էր վայելում, ու այժմ ցանկանում է նորից կվերականգնել այդ փառքը: Կարծում եմ, որ քաղաքական տեքստերով նրա ներկայացումները ի վնաս են իրեն լինելու:

-Ոչ կոռեկտ արտահայտություններով պիտակավորում է քաղաքական դաշտի մյուս խաղացողներին՝ ասելով, թե «հետեւից են մտել»: Թույլատրելի՞ է նման բան:

-Թույլատրելիի ու անթույլատրելիի մասով ասեմ՝ Հայկ Մարությանը միշտ է անցել թույլատրելիի սահմանները թե՛ ավագանու նիստերի, թե՛ պարզապես իր հայտարարությունների ժամանակ, ու ինձ համար զարմանալի չէր նման բան լսել նրանից: Մի անգամ ասել եմ, այժմ էլ կրկնեմ՝ Հայկ Մարությանն իր ասած «հետեւում» 2-ից ավելի տարիներ աշխատել է: Շատ հարմար էր նրան այդ հետեւում գտնվել: Այդ հետեւում նա, ըստ երեւույթին, թուլություն է զգացել ու արագ այնտեղից դուրս եկել: Ժամանակը ցույց կտա, թե այլ «հետեւներում» հաստատվում է Մարությանը, թե ոչ: Լիահույս եմ, որ նա շատ ողջամիտ կգտնվի եւ կհասկանա, որ իր տեղը միմիայն բեմերի հետեւում է:

-Հայտնի է, որ քաղաքապետ եղած ժամանակ նա առհասարակ չէր շփվում ավագանու անդամների հետ: Որ ժամին ցանկանում, աշխատանքի էր գալիս-գնում: Հիմա բարոյական ի՞նչ իրավունքով է քննադատում մյուսների աշխատանքը կամ իր իսկ թիմակիցներին:

-Առհասարակ ինձ համար ամենաանբարոյական բանն այն է, որ սկսում ես բամբասել կամ չարախոսել այն քաղաքական ուժի մասին, որը քեզ ծնել է: Ի տարբերություն իրեն՝ գոնե իր քաղաքական թիմը պահպանել է կոռեկտությունն ու նույն կերպով իր մասին չի արտահայտվել: Մարությանը թե՛ իրեն անվստահություն հայտնելու նիստի ժամանակ, թե՛ մինչեւ օրս արած բոլոր հայտարարությունների ժամանակ իր թիմակիցների նկատմամբ անցել է բոլոր սահմանները: Այո, նա աշխատանքի էր գալիս, երբ ցանկանում էր, գնում էր արձակուրդի, երբ ցանկանում էր:

Ինչ վերաբերում էր ավագանու անդամների հետ շփմանը, ապա այդ մասով չեմ կարող առանձնապես բողոք ասել, որովհետեւ ես այն ավագանու անդամներից եմ, որը շատ քիչ է շփվել Մարությանի հետ: Ինչ վերաբերում է նախկին գործընկերների կամ թիմակիցներին հասցեին այժմ արվող քննադատություններին, ապա նա պետք է գնա ու նայի 2-3 տարիների ընթացքում մեր բոլոր բարձրաձայնած խնդիրները: Այդ ժամանակ կհասկանա, որ, որպես քաղաքապետ, ահավոր վատ է աշխատել:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱԺ-Ն ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿՎԵՐԸՆՏՐԻ

Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը սեպտեմբերի 6-ին քննարկել է Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի թափուր տեղի համար ՀՌՀ նախագահ Տիգրան Հակոբյանի թեկնածությունն առաջադրելու հարցը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հակոբյանին ՀՌՀ թափուր տեղի համար առաջադրել է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը: Նրա թեկնածությունը նիստի ժամանակ ընդունվել է միաձայն:

ՀՌՀ-ն այժմ նախագահող Տիգրան Հակոբյանի՝ որպես ՀՌՀ անդամ պաշտոնավարման ժամկետն ավարտվում է 2022-ի սեպտեմբերի 15-ին: Նա ՀՌՀ անդամ է ընտրվել դեռեւս 5-րդ գումարման ԱԺ կողմից 2016-ի սեպտեմբերի 15-ին: Հակոբյանը ՀՌՀ-ն նախագահել սկսել է 2019-ի հունվարի 29-ից: Խորհրդարանն այժմ Հակոբյանին որպես ՀՌՀ անդամ է ընտրելու, որպեսզի նա շարունակի պաշտոնավարել ՀՌՀ նախագահի պաշտոնում:

Դատելով հանգամանքից, որ Տիգրան Հակոբյանին իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն է առաջադրել ՀՌՀ անդամի թեկնածու, ապա կարելի է ենթադրել, որ քաղաքական մեծամասնությունը նրա թեկնածությունը կպաշտպանի նաեւ ԱԺ լիագումար նիստերի ժամանակ կազմակերպվելիք քննարկումների ու վերջնական քվերակության ժամանակ:

ՄՆԴԻԿԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԿԱՐԳԵԼՎԻ

Ֆիզիկական անձանց կողմից անձնական նպատակներով Հայաստան սնդիկի ներմուծումը կարգելվի, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներից ներքին փոխադրումը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ կարգելվի նաեւ ՀՀ-ից արտահանումը: Իսկ արգելքի ժամկետը սկսվելու է 2023 թվականի հունվարի 1-ից եւ գործելու է մինչեւ 2023 թվականի հուլիսի 1-ը:

Ըստ շրջակա միջավայրի նախարարության՝ սահմանված կարգավորումների շնորհիվ Հայաստանից սնդիկի արտահանումը կլինի պետական մարմինների հսկողության ներքո, ինչը կնվազեցնի սնդիկի ապօրինի շրջանառության հետ կապված ռիսկերը: Ավելին, այս կառույցն ակնկալում է, որ աստիճանաբար սնդիկի ներմուծումը կկրճատվի, դուրս կբերվի շրջանառությունից:

Նշենք, որ սնդիկի ներթափանցումը մարդու օրգանիզմ հաճախ տեղի է ունենում դրա գոլորշիների ներշնչման ժամանակ, որոնք հոտ չունեն: Սնդիկի նույնիսկ փոքր քանակների ազդեցության հետեւանքով կարող են ի հայտ գալ առողջական խնդիրներ եւ ծանր թունավորում: Սնդիկը թունավոր ազդեցություն է թողնում նյարդային, մարսողական եւ իմունային համակարգերի, թոքերի, երիկամների, մաշկի եւ աչքերի վրա: Սնդիկի հետ կապված սուր թունավորումները կարող են հանգեցնել մահվան:

ԼՈՒՐԵՐ

ԳԱԶԻ ԳՆԻՑ ԿԱԹՎԱԾ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ

Մեծ Բրիտանիայում ձեռնարկությունների ավելի քան 60 %-ը կարող է փակվել էլեկտրաէներգիայի բարձր գների պատճառով: Bloo2berg գործակալությունն է հայտնում՝ հավելելով, որ Եվրոպայում տիրող ներկայիս ճգնաժամն արտադրությամբ զբաղվող ընկերություններին ընտրության առաջ է կանգնեցրել. նրանք կամ պետք է կրճատեն, կամ ամբողջապես դադարեցնեն արտադրության ծավալները: Նշենք, որ 2022-ի հոկտեմբերի 1-ից, երբ գազի գինը բարձրանա, Եվրոպայում կբարձրանա նաեւ էլեկտրաէներգիայի գինը 80 %-ով: Իսկ գազի գնի բարձրացման պատճառն այն է, որ Եվրոպային գազ մատակարարող «Հյուսիսային հոսք»-ը, դեռեւս հունիսի կեսերի սկսած, սահմանափակումներով է աշխատում, իսկ հուլիսի վերջերից այն աշխատում է իր հզորության միայն 20 %-ով:

Ռուսական կողմը մատակարարումների նվազումը պայմանավորում է պատժամիջոցներով, որոնք խնդիրներ են առաջացրել գազի պոմպակայանների սպասարկմամբ եւ վերանորոգմամբ զբաղվող Siemens ընկերության մոտ: ArmLur.am-ի հետ զրույցում տնտեսագետ Կարեն Սարգսյանը բացատրում է՝ գազատարը վերանորոգման կարիք ունի, իսկ Siemens ընկերությունը, որի նկատմամբ նույնպես Արեւմուտքը պատժամիջոցներ է կիրառել, հնարավորություն չունի վերանորոգել այն: Այսօրվա դրությամբ, ասում է Սարգսյանը, գազի գինը բորսայում բարձրացել է մոտ երեսուն տոկոսով՝ 1000 խմ դիմաց վաճառվելով 2900 դոլարով:

Թեեւ Եվրոպան փորձում է էներգիայի տարբեր այլ աղբյուրներ գտնել՝ նվազեցնելու Ռուսաստանից կախում ունենալու հանգամանքը, բայց, տնտեսագետի համոզմամբ, դա այդքան էլ հեշտ չի ստացվի, քանի որ Եվրոպան սպառած գազի 45 տոկոսը Ռուսաստանից է ձեռք բերում: Պաշտոնական Մոսկվան Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղարի շուրթերով է արձագանքում Եվրոպա մատակարարվող գազի հետ կապված խնդիրներին:

««Գազպրոմը» չէ, որ մեղավոր է Եվրոպայի էներգամատակարարման հետ կապված իրավիճակի համար, այլ մեղավոր են «վայ» քաղաքական գործիչները, որոնք որոշում են կայացրել Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ կիրառել: Եվ այս դժբախտ քաղաքական գործիչներն են, որ հիմա իրենց քաղաքացիներին ստիպում են մեռնել կաթվածից, երբ տեսնում են էլեկտրաէներգիայի վճարները: Եվ հիմա, երբ ցուրտը կսկսվի, իրավիճակն էլ ավելի կվատթարանա»,- շեշտում է Պեսկովը:

Մոտալուտ ցրտի մասին եվրոպացիներին նաեւ ռուսական «Գազպրոմ» ընկերությունն է զգուշացրել՝ հետաքրքրաշարժ մի տեսահոլովակ նկարելով ու տարածելով: Տեսահոլովակը թեեւ «Գազպրոմի» էջերից հեռացվել է, բայց դրանով ընկերությունն ասես զգուշացնող նոտա է հղել Արեւմուտքի բնակիչներին, թե մոտեցող ձմեռը Եվրոպային հաստատ չի շոջանցելու:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «Վեոլիա ջուր» ընկերության կողմից գրանցված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ կիրականացնի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ մոնիթորինգը կանցկացվի սեպտեմբերի 1-ից մինչեւ հոկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Իսկ մինչ այդ, նշենք, որ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն այս տավա օգոստոսի 8-ին հանձնաժողով հայտ է ներկայացրել խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման վերաբերյալ:

Տեղեկացնենք, որ ընկերությունն առաջարկում է մանրածախ խմելու ջրի սակագինը յուրաքանչյուր 1 խմ-ի դիմաց 177.653 դրամ սահմանել, մանրածախ ջրահեռացման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խմ-ի դիմաց՝ 31.350 դրամ:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Արթուր Մկրտչյանի լիազորությունները դադարեցվել են: Նրա պաշտոնավարման ժամկետը լրացել է օգոստոսի 3-ին: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ներկա պահին նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները կատարում է Գագիկ Պողոսյանը:

ՖԻԶԻԿԱՊԵՍ ՉԵՆ ԿԱՐՈՂ

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական գործեր քննող դատավորները հայտնվել են լուրջ խնդրի առաջ: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ քաղաքացիական գործերը քննող դատարանում պայթյունավտանգ իրավիճակ է, եւ դատավորները չեն կարողանում իրավիճակից ելք գտնել: Բանն այն է, որ քաղաքացիական գործեր քննող դատավորները 40-ն են: Օգոստոս ամսին դատավորների զգալի մասը գնում է արձակուրդ եւ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահը միջոցներ չի ձեռնարկում դատարաններն ապահովելու անհրաժեշտ թվով դատավորներով. օգոստոս ամսին քաղաքացիական գործերը քննելու համար աշխատում են շատ քիչ թվով դատավորներ, որոնց էլ մեկ օրվա ընթացքում մակագրվում է 100 գործ:

Դատավորները ներկա պահին հայտնվել են խնդրի առաջ: Ըստ մեզ հասած լուրերի՝ ստացված գործերը մնացել են դատարանի պատերի տակ, քանի որ դատավորները չեն հասցնում գործերը քննել: Ավելին, մեզ հասած լուրերի համաձայն՝ օգոստոս ամսին ստացված բոլոր գործերով նիստերը միգուցե նշանակվեն հոկտեմբեր -նոյեմբեր ամիսներին, քանի որ դատավորները չեն կարող ֆիզիկապես մեկ օրվա մեջ 100 գործ ուսումնասիրել:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ քիչ առաջ էջմիածնի կրակոցների գործով ձերբակալվել է ենթադրյալ սպանություն կատարած անձը, որը էջմիածին քաղաքից է եւ հայտնի է Ուջանիկ անունով:

Հիշեցնենք, որ կրակոցների հետեւանքով հիվանդանոց էին տեղափոխվել Վաղարշապատ քաղաքի բնակիչ 27-ամյա Ա. Միքայելյանը, որն ունեցել է «կրծքավանդակի առաջնային պատի հրազենային վիրավորում», 27-ամյա Ա. Առաքելյանը: Կարճ ժամանակ անց Ա. Միքայելյանը, գիտակցության չգալով, մահացել էր, իսկ, ահա, վիրավորված Ա. Առաքելյանը տեղափոխվել էր Երեւան եւ վիրահատվել:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵՎ ՊՈՒՏԻՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Վլադիվոստոկում անցկացվող «Բազմաբեւեռ աշխարհի ճանապարհին» թեմայով Արեւելյան տնտեսական 7-րդ համաժողովի շրջանակում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը:

Իր խոսքում ՌԴ նախագահը, մասնավորապես, նշել է. «Հարգելի՛ Նիկոլ Վովայի, մենք Ձեզ հետ մշտական կապի մեջ ենք՝ կանոնավոր հանդիպումներ, հեռախոսազրույցներ՝ ընթացիկ արդիական հարցերի շուրջ, բայց, այնուամենայնիվ, այսօր անձնապես հանդիպելով Ձեզ՝ կարեւոր եմ համարում հիշատակել, որ այս տարի մենք նշում ենք դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակը, հիմնարար պայմանագրի ստորագրման 25-ամյակը:

Մեր հարաբերությունները զարգանում են բոլոր ուղղություններով: Մենք աշխատում ենք մեր կազմակերպություններում՝ եւ՛ տնտեսական կազմակերպությունում, եւ՛ ՀԱՊԿ-ում, նկատի ունեմ՝ անվտանգության եւ կայունության ապահովումը: Մոտ ապագայում Դուք պլանավորում եք լինել նաեւ Ուզբեկստանում կայանալիք Շանհայի համագործակցության կազմակերպության շրջանակում նախատեսվող միջոցառումներին, որտեղ հնարավորություն կլինի եւս մեկ անգամ հանդիպել եւ գործընկերների հետ բանակցել:

Հայաստանի առեւտրատնտեսական գործընկերների շրջանակում Ռուսաստանը վստահորեն պահպանում է առաջին տեղը: Առեւտրաշրջանառությունը վերջին շրջանում մոտավորապես 25-30 տոկոսով աճել է: Մենք, իրոք, նկատում ենք Հայաստանում տնտեսական կայունացումը: Ձեր կառավարության կողմից շատ բան է արվել այդ ուղղությամբ:

Իհարկե, ամենազգայուն հարցերից մեկը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի շուրջ անվտանգության ապահովման հետ կապված իրավիճակին: Մենք դրա շուրջ մշտապես Ձեզ հետ խոսում ենք, մշտապես կապի մեջ ենք: Եվ ես ուրախ եմ Ռուսաստան Ձեր այցի ընթացքում Վլադիվաստոկում տնտեսական ֆորումի շրջանակում զրուցել այս բոլոր թեմաների շուրջ:

Մեզ մոտ ընդլայնվում են այն ընկերությունների եւ մարդկանց շրջանակը, որոնք փոխգործակցում են: Մոտ ապագայում նաեւ բիզնես-օպերատորներն են պատրաստվում հանդիպել, նաեւ մարզային ֆորում պետք է անցկացնեն: Նախատեսված են նաեւ այլ միջոցառումներ, այդ թվում՝ հումանիտար, մշակույթի, կրթության ոլորտներում:

Շատ շնորհակալ եմ, որ հրավերն ընդունել եք եւ այցելել եք Վլադիվաստոկում տնտեսական ֆորումին»:

Իր հերթին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասել է. «Շատ շնորհակալ եմ, Վլադիմիր Վլադիմիրի: Թույլ տվեք եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնել Ձեզ Արեւելյան տնտեսական ֆորումին մասնակցելու հրավերի համար: Անկեղծ ասած, ֆորումն ինձ դուր է եկել (այն, իհարկե, շարունակվում է), տպավորված եմ Վլադիվաստոկով. հիանալի վայր է: Հույս ունեմ, որ դեռ առիթներ կլինեն այցելել ոչ միայն աշխատանքային նպատակով, այլ նաեւ այլ առիթներով:

Իհարկե, ինչպես Դուք արդեն նշեցիք, ընթացիկ տարին շատ կարեւոր տարի էր մեր հարաբերությունների համար. նկատի ունեմ եւ՛ ՀԱՊԿ-ի, եւ՛ մեր երկկողմ հարաբերությունների հետ կապված հոբելյանները:

Ռուսաստանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ամենամոտ գործընկերն ու ռազմավարական դաշնակիցը: Եվ հատկապես այս բարդ ժամանակներում շատ կարեւոր են մշտական շփումները եւ դիրքորոշումների հստակեցումը:

Դուք նշեցիք, ես էլ եմ ցանկանում նշել ռուսաստանյան խաղաղապահների առաքելությունը Լեռնային Ղարաբաղում: Պետք է խոստովանել, որ դա այնքան էլ հեշտ առաքելություն չէ: Մենք բազմաթիվ անգամներ խոսել ենք դրա մասին: Մենք շատ բարձր ենք գնահատում Ռուսաստանի խաղաղապահների գործունեությունը Լեռնային Ղարաբաղում, Լաչինի միջանցքում, եւ ես կարծում եմ, որ դա շատ կարեւոր է ընդգծել: Ընդհանրապես, Լեռնային Ղարաբաղում անվտանգության ապահովման իմաստով կան նրբություններ, որոնք մենք մշտապես քննարկում ենք, եւ կարծում եմ՝ այսօր էլ շատ տեղին կլինի այդ հարցերը քննարկել:

Մեր երկրների առեւտրատնտեսական հարաբերություններին վերաբերող հարցերը նույնպես ավանդական բնույթ են կրում: Շատ ուրախալի է, որ հետհամավարակային շրջանում մեր առեւտրատնտեսական հարաբերությունները ոչ միայն վերականգվել են, այլ նաեւ որոշակի նոր դրական զարգացումներ կան, որոնց մասին մենք խոսեցինք ֆորումի ժամանակ:

Իհարկե, մեր հարաբերությունների օրակարգը շատ հագեցած է, եւ ես վստահ եմ, որ այսօր նույնպես կունենանք բովանդակալից եւ հագեցած զրույց: Եւս մեկ անգամ շնորհակալություն ջերմ ընդունելության համար»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՔ ՕՏԱՐ ՉԷ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն Արեւելյան տնտեսական ֆորումում պատասխանել է հարցին, թե ինչպես է վերաբերվում ռուս միգրանտներին, որոնք տեղափոխվել են Հայաստան: «Ռուսաստանի քաղաքական ղեկավարությունը ողջունում է այն ամենը, ինչը ռուսական բիզնեսի օգտին է: Եթե հիմա իրավիճակն այնպես է ձեւավորվել, որ մարդկանց, իսկ դրանք հիմնականում SS ոլորտի ներկայացուցիչներն են, առավել նպատակահարմար է աշխատել այնտեղ, ապա, ի սեր Աստծո, թող աշխատեն: Հայաստանը մեզ համար օտար երկիր չէ, կարելի է աշխատել Երեւանում, իսկ փաստացի ապրել Մոսկվայում»,- ասել է Պուտինը:

ԿԱՐԳ ԿՍԱՀՄԱՆՎԻ

Պատմական արժեք ունեցող բնակավայրերի համար առաջիկայում պատմական միջավայրի պահպանությանն ուղղված ծրագրային փաստաթղթերի մշակման հստակ կարգ կսահմանվի: Քաղաքաշինության կոմիտեն մշակում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համագործակցելով շահառու գերատեսչությունների հետ:

ՀԱՆՈՒՆ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ

Կովկասի հարցերով բանակցություններում ԱՄՆ պետքարտուղարի գլխավոր խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ԱՄՆ համանախագահ Ֆիլիպ Ռիքերը այս շաբաթ կայցելի Հայաստան:

«Մենք ակնկալում ենք, որ սա տարածաշրջան կատարվելիք պարբերական այցերից առաջինը կլինի: Նա այս երեկո մեկնում է ու կլինի Հայաստանում, Վրաստանում եւ Ադրբեջանում: Բոլոր երեք երկրներում հանդիպելու է բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ քննարկելու տարածաշրջանին առնչվող հիմնական հարցերը, ինչպես նաեւ որոնելու ուղիներ՝ աջակցելու գործընկերներին ու ուղղակիորեն եւ կառուցողական ներգրավվելու՝ հանուն հրատապ խնդիրների լուծման եւ տարածաշրջանային հետագա համագործակցության»,- ասել է Պատելը:

«ԲԻԶՆԵՍ ՆԱԽԱՃԱՇ»

Փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը սեպտեմբերի 7-ին «Բիզնես-նախաճաշ»-ի ձեւաչափով հերթական հանդիպումն է ունեցել Հայաստանում օտարերկրյա ներդրումներով ընկերությունների երկու տասնյակը գերազանցող ղեկավարների եւ ներկայացուցիչների հետ: Ընկերությունների ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել Հայաստանի կառավարությանն ու ժողովրդին ջերմ ընդունելության ու հյուրընկալության համար եւ հիմնականում ընդգծել, որ Հայաստանում իրենց գործունեությունը շարունակելու ու ավելի շատ աշխատակիցներ ներգրավելու նպատակ ունեն:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆՎԱԶՈՒՄ

Առանձին լրատվամիջոցներ, հղում կատարելով ՀՀ վիճակագրական ծառայության կողմից հրապարակված՝ 2022թ. առաջին յոթ ամիսների ընթացքում հանրապետությունում գրանցված հանցագործությունների վիճակագրական տվյալներին, ներկայացրել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համադրությամբ հանցավորության ընդհանուր էական աճի պատկեր՝ այդ թվում առձանագրելով սպանություններ՝ շուրջ 5 անգամ աճ: Այս մասին հայտնում են Գլխավոր դատախազությունից:

Հաշվի առնելով, որ վիճակագրության զուտ թվային տվյալների նման պարզ վերարտադրումը կարող է թյուր կարծիք ձեւավորել հանցավորության ընդհանուր վիճակի անոմալ վատթարացման, հետեւաբար նաեւ հանրապետությունում հանցավորության վիճակի վերահսկելիության վերաբերյալ, անհրաժեշտ ենք համարում պարզաբանել հետեւյալը: Արձանագրված դեպքերի քանակական աճի պատկերը պայմանավորված է մի շարք այնպիսի նոր հանգամանքներով, որոնք առավելապես պայմանավորված են քրեական եւ քրեական դատավարության նոր օրենսգրքերի իրավակարգավորումների, պահանջների ազդեցությամբ վարվող վիճակագրության մեթոդաբանության փոփոխությամբ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելու հանգամանքի բերումով առերեւույթ հանցագործության դեպքերի լուծման ընթացակարգն էապես փոխվել է: Վերացել է նյութերի նախապատրաստման փուլը, եւ ցանկացած այնպիսի հաղորդման կապակցությամբ, որով փաստվող դեպքին ողջամտորեն կարող է տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որեւէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, նախաձեռնվում է քրեական վարույթ եւ իրականացվում նախաքննություն: Նման կարգավորումների պայմաններում բոլոր այն իրավիճակներում, որոնցով նախկինում նախապատրաստվել են նյութեր, այժմ նախաձեռնվում են քրեական վարույթներ: Արդյունքում, օրինակ, եթե նախկինում նախապատրաստվում էին նյութեր, եւ բռնի մահվան վերաբերյալ փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում էր քրեական գործ հարուցվում, ապա այժմ բոլոր այդ դեպքերով անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում նախաձեռնվում է քրեական վարույթ, գլխավորապես՝ առերեւույթ սպանության դեպքի կապակցությամբ, եւ իրականացվում է նախաքննություն: Որպես նշվածի հիմնավորում՝ փաստենք, որ, 2022 թվականի առաջին յոթ ամիսների տվյալներով, ՀՀ ոստիկանության կողմից արձանագրված սպանության դեպքերի թիվը կազմել է 163, որոնցից 134-ը կամ 82.2%-ը հանկարծամահության դեպքեր են, իսկ միայն 29-ը՝ այնպիսի դեպքեր, որոնցով նախկին կարգավորումների պայմաններում քրեական գործը հարուցվում էր սպանության դեպքի առթիվ: Որպես վերը նշվածի հիմնավորում՝ նշենք նաեւ, որ մարդու դեմ ուղղված հանցագործություններն աճել են 70.6 %-ով, առանձնապես ծանր հանցագործությունները՝ 163-ով կամ 90.6%-ով / 180-343/: Փաստորեն, առանձնապես ծանր հանցագործությունների ավելացած 163 դեպքից միայն 134-ը կամ 82.2%-ը հենց հանկարծամահություն հանդիսացող դեպքերն են, որոնցով վարույթ է նախաձեռնվել սպանության դեպքի առթիվ: Այսպիսով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ առերեւույթ իրական սպանության դեպքերի թիվը, հակառակը, նվազել է 4-ով կամ 12.1 %-ով: Սպանության փորձի դեպքերի թիվը նույնպես նվազել է 5-ով կամ 17.2%-ով /29-24/, ինչի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնել է 2022թ. օգոստոսի 30-ին հրապարակած հաղորդագրությամբ: Բացի այդ, 2021 թվականի օգոստոսի 30-ից ՀՀ քրեական նախկին օրենսգրքում ավելացել էր նոր հանցատեսակ՝ նախատեսված 137.1 հոդվածով, որն էականորեն ազդել է հանցավորության վիճակն արտացոլող թվական ցուցանիշների վրա: Մասնավորապես, նշված հոդվածով արձանագրված դեպքերի թիվը 2022 թվականի առաջին յոթ ամիսներին կազմել է 1160, մինչդեռ 2021 թվականի 1-ին յոթ ամիսներին օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող նույնանման արարքները, փաստորեն, քրեականացված չեն եղել:

Որպես վերը նշվածի հիմնավորում՝ փաստենք, որ տվյալ հանցատեսակի հաշվին են նաեւ ավելացել մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը. աճը կազմել է 1562 կամ 70.6 % /2211-3773/, որից 30.7 %-ը միայն կազմել են 2003թ. ընդունված քրեական օրենսգրքի 137.1 հոդվածով նախատեսված դեպքերը:

Այսինքն՝ հանցագործությունների շարժընթացում չեն արձանագրվել էական այնպիսի փոփոխություններ կամ շեղումներ, որոնք կարող էին ազդել հանցավորության եւ իրավակարգի ընդհանուր վիճակի վերահսկելիության վրա:

ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՉՏՐԱՄԱԴՐԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ ֆինչական կոմիտեի հատկատես կարեւոր գործերի ֆինության գլխավոր վարչությունում ավարտվել է համակարգչային հափշտակություն, փողերի լվացում կատարելու դեմքերի առթիվ ֆինվող քրեական վարույթի նախաֆինությունը:

ՔԿ-ից հայտնում են, որ իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց, ինչպես նաեւ տուժածների շրջանակը, հափշտակության եւ փողերի լվացման մեխանիզմը, քաղաքացիներին պատճառված վնասի չափը:

Մասնավորապես՝ քննությամբ հիմնավորվել է, որ Երեւանի 26-ամյա բնակչի կողմից 2020-2022 թվականներին facebook.com սոցիալական կայքում, որպես վարկային կազմակերպության էջեր, ստեղծվել են Money Man credit, Universal Credit, Universal Credit՝, Universal Credit UCO եւ Global Credit անհատական տվյալներով օգտահաշիվներ եւ, ներկայանալով որպես վարկային կազմակերպության գործակալ, իրականությունը խեղաթյուրելով, բանկային քարտի կամ Telձell wallet էլեկտրոնային դրամապանակի հաշվում առկա գումարի հնգապատիկի չափով վարկ տրամադրելու պատրվակով, խաբեությամբ, ինչպես միայնակ, այնպես էլ ընկերոջ հետ համատեղ պարզել են օգտատերերի անվամբ թողարկված բանկային քարտերի վավերապայմանները եւ դրանց կցված բջջային հեռախոսահամարներին ելքային փոխանցումներ կատարելու նպատակով ստացված գաղտնաբառերը:

Այնուհետեւ օգտատերերին հավաստիացրել են, թե նրանց հեռախոսահամարներին ստացված գաղտնաբառը հանդիսանում է որպես իրենց կողմից փոխանցվող վարկի հաստատման գաղտնաբառ, եւ ապօրինի տիրապետելով նրանց անվամբ եւ նույնականացման տվյալներով Telcell wallet էլեկտրոնային դրամապանակներին՝ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ ապօրինի հասանելիություն են ստացել թվով 65 օգտատերերի էլեկտրոնային դրամապանակներին եւ տնօրինելով նշված անձանց հաշիվները՝ փոխանցումներ կատարելու եղանակով հափշտակել դրանցում առկա ընդհանուր 6,729,703.4 ՀՀ դրամ գումար, որից 4,251,823.4 ՀՀ դրամը 26-ամյա երիտասարդը հափշտակել է խմբի կազմում, իսկ 2,477,880 ՀՀ դրամը՝միայնակ: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 26-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, 257-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով եւ 269-րդ հոդվածի 1-ին մասով, որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է կալանավորումը: Վերջինիս ընկերոջը մեղադրանք է ներկայացվել՝ Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով եւ 296-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ որպես խափանման միջոց վերջինիս նկատմամբ ընտրվել է չբացակայելու արգելքը: Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան: Նախաքննության ընթացքում քաղաքացիներին պատճառված վնասից 2,900,000 դրամը վերականգնվել է: Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն եւս մեկ անգամ հորդորում է նմանատիպ եւ այլ դեպքերից խուսափելու համար անծանոթ անձանց չտրամադրել անձնական տվյալներ:

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ Է ՈՒ ՈՉ ՑԱՆԿԱԼԻ

ArmLur.am-ի զրուցակիցն է ԱԱԾ նախկին տնօրեն Միքայել Համբարձումյանը:

-Պարոն Համբարձումյան, արդեն երկու նախադեպ կա պետական դավաճանության դեպքերի մասով հարուցված քրեական գործերով: Մասնավորապես, Ազգային անվտանգության ծառայությունը զինվորականներին մեղադրանք է առաջադրում պետական դավաճանության գործերով, նրանց կալանավորում, եւ մեկ տարի անց մեղադրանքը վերաորակում են որպես, օրինակ, ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունք: Ըստ Ձեզ՝ սա նորմա՞լ է, երբ անձին նման ծանր մեղադրանք են առաջադրում, ընտանիքը բաժանվում է, եւ հետագայում հասկանում են, որ նա նման ծանր հանցանք չի կատարել:

- Գիտեք, ծանոթ չլինելով գործի նյութերին՝ շատ դժվար է Ձեր հարցին միանշանակ պատասխանելը, հետեւաբար փաստերին ավելի հիմնովին կարող են արձագանքել ու գնահատական տալ գործով ներգրավված փաստաբանները: Սակայն ինքնին երեւույթը խնդրահարույց է ու ոչ ցանկալի: Ենթադրում եմ, որ նախաքննական մարմինը սկզբնական շրջանում որոշակի մակերեսային տվյալներ է ունեցել, որոնք նախաքննության ընթացքում չեն հաստատվել, ու արդյունքում ստիպված են եղել արարքը վերաորակել: Այդ տվյալներն արդյոք բավարար են եղել պետական դավաճանության մեղադրանքով քրեական հետապնդում սկսելու համար, թե կամայական մոտեցում է ցուցաբերվել՝կրկնում եմ, չեմ կարող մեկնաբանել, քանի որ ծանոթ չեմ գործի նյութերին:

Ընդհանրապես, պետական դավաճանության, լրտեսության դեպքերով մինչեւ քրեական գործերի հարուցումը նախկինում շատ մանրամասն վերլուծություն էր իրականացվում, գնահատվում էին օպերատիվ նյութերը, հավաքված տվյալները, ապացույցները, կանխատեսվում էր իրավական հեռանկարը, թե արդյոք դրանք բավարար են լինելու քրեական հետապնդում սկսելու եւ գործին դատական վախճան ապահովելու համար: Որեւէ մեկը ի սկզբանե հույսը չէր դնում ամիսների ընթացքում խոստովանական ցուցմունք ստանալու վրա,. իհարկե այդ ուղղությամբ եւս քննիչները նախաքննության ժամանակ ջանասիրաբար աշխատում էին: Սա շատ լուրջ հանցակազմ է՝դժվար ապացուցելի, ուստի մինչեւ քրեական հետապնդում սկսելը լրջագույն օպերատիվ աշխատանք էր տարվում:

Ես դեմ եմ նման դեպքերի հապճեպ հանրայնացմանը՝ հատկապես պետությունը, բանակն ու, ինչու չէ, ազգն արժեզրկող, վարկաբեկող բովանդակությամբ ռեպորտաժներով: Նախաքննական մարմինը զգուշավորություն պետք է դրսեւորեր, չշտապեր:

Ցավոք, առանձին դեպքեր վաղաժամ լուսաբանվել են նաեւ նախկինում՝ մեր պաշտոնավարման ժամանակ, ուստի ճիշտ հետեւություն պետք է անել այդ իմաստով:

Ամեն դեպքում, ենթադրում եմ՝ քննիչները ունեցել են որոշակի հիմքեր տվյալ անձանց վերաբերյալ, դրանք նախաքննության ընթացքում կամ ժխտվել են, կամ չեն ամրապնդվել այլ ապացույցներով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 60 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱԼԱՆՔԸ ՓՈԽԱՐԻՆՎԵԼ Է ԳՐԱՎՈՎ

Սեպտեմբերի 6-ին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրուցում 2020թ. մարտի 18-ին Արծվաբերդ գյուղում դանակահարության հետեւանքով մահացած, Բերդ համայնքի Այգեձոր գյուղի 22-ամյա բնակիչ Բորիս Ալիփյանի մայրը լացելով հայտնեց, որ իր որդու մահվան գործով դատավարության սեպտեմբերի 6-ի նիստը Բերդ քաղաքում չի կայացել: Այն չի կայացել, քանի որ քրեական գործով մեղադրվող, Արծվաբերդ գյուղի բնակիչ Արտակ Մխիթարյանին եռամսյա վարժական հավաքի են տարել: «Դատալեքս» դատական կայքից տեղեկացա, որ Արտակ Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի մարտի 18-ին՝ ժամը 19:00-ից 20:00-ն ընկած ժամանակահատվածում, Տավուշի մարզի Բերդ համայնքի Արծվաբերդ բնակավայրից դեպի Չորաթան բնակավայր տանող հանդամիջյան ավտոճանապարհի 0,1 կիլոմետրում միջամտել է Տավուշի մարզի Այգեձոր բնակավայրի բնակիչներ Դավիթ Ծաղկյանի, Սարգիս Բաբայանի, Ջոհրաբ Եղիազարյանի, Արթուր Եղիազարյանի, Ազատ Օրդյանի, Բորիս Ալիփյանի եւ իր եղբայրների՝ Անդրանիկ եւ Արմեն Մխիթարյանների միջեւ տեղի ունեցող վիճաբանությանը եւ ծեծկռտուքին, որի ժամանակ իր մոտ գտնվող ծալովի դանակով երկու անգամ հարվածել է Դավիթ Ծաղկյանին՝ պատճառելով միջին ծանրության վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով, նույն դանակով մեկ անգամ հարվածել է Բորիս Ալիփյանի ձախ ազդրի վերին երրորդականի առաջամիջնային մակերեսին, որի հետեւանքով առաջացած արյան առատ արյունահոսությունից որպեսզի հետո անզգուշությամբ առաջացրել է Բորիս Ալիփյանի մահը: Ա. Մխիթարյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 117 հոդվածով, 113 հոդվածի 1-ին մասով եւ 112 հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով: Նա 2020թ. մարտի 21-ից մինչեւ 2021թ. սեպտեմբերի 13-ը եղել է կալանքի տակ: 2021թ. սեպտեմբերի 13-ին բավարարելով Արտակ Մխիթարյանի պաշտպանների միջնորդությունը՝ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ջոյա Ջաքինյանը Ա. Մխիթարյանի խափանման միջոց կալանքը փոխարինել է 5 միլիոն դրամ գրավով:

ԴԻՆ ԱՆՃԱՆԱՉԵԼԻ Է

Սեպտեմբերի 6-ին՝ ժամը 14:44-ին, տեղեկություն է ստացվել, որ Ջողազի ջրամբարում ջրահեղձված քաղաքացի կա. փրկարարները ջրամբարից դուրս են բերել տղամարդու դիակ: Դիակը գտնվել է ոչ թե ջրամբարում, այլ Քարահան գետը ջրամբար լցվելու վայրում, ուր ձկնորսը նկատել է ջրից դուրս եկած ձեռք: Տղամարդու դիակը շատ ուռած է եղել, այն չեն կարողացել ճանաչել: Կիրանց գյուղից, որի որոշ բնակիչներ տեսել են դին, հայտնեցին, որ չի բացառվում, որ տղամարդը ոչ թե խեղդվել է ջրամբարում, այլ նրա մահը վրա է հասել բռնություն գործադրելու հետեւանքով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

ԲԻԶՆԵՍ ԳՐԱՆՑԵԼԻՍ ԿՎԵՐԱՆԱ ԱՆՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նոր գրանցվող բիզնեսները, իրավական հակասությունների հետեւանքով առաջացող խնդիրներով պայմանավորված, հաճախ ունենում են հարկման՝ իրենց համար նախընտրելի համակարգն ընտրելու հետ կապված դժվարություններ: Առաջարկվում է խնդիրը կարգավորել պետական ռեգիստրի գործակալության կողմից գրանցվող հարկ վճարողի հարկման համակարգի մասին նշման իրավասություն վերապահող նորմի վերացման միջոցով:

Այս մասին տեղեկանում ենք Ազգային ժողովի լրատվության բաժնից:

««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը քննարկվել է Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի սեպտեմբերի 7-ի նիստում:

Ըստ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի՝ նախագծի ընդունմամբ՝ բիզնես գրանցելիս կվերանա հարկման համակարգ ընտրելու հետ կապված տեխնիկական անհստակությունը, ինչպես նաեւ կխնայվի ՊԵԿ-ի եւ դատարանների կողմից խնդրի առարկա գործերի վրա ծախսվող ժամանակը:

Միաժամանակ առաջարկվում է Պետական ռեգիստրի գործակալությունում ԱՁ կամ իրավաբանական անձ գրանցողներին տեղեկացնել փոխկապակցվածության հետ կապված հարկման համակարգերի ընտրության սահմանափակումների վերաբերյալ հետագա խնդիրները կանխարգելելու նպատակով:

Հանձնաժողովը նախագծին դրական եզրակացություն է տվել:

Վահան Քերոբյանի ներկայացմամբ՝ Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովն առաջին ընթերցմամբ քննարկել է նաեւ ««Աշխարհագրական նշումների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է «Աշխարհագրական նշումների մասին» ՀՀ օրենքում տեղ գտած որոշ, մասնավորապես՝ հսկողության եւ վերահսկողության հետ կապված դրույթները հստակեցնելու, ինչպես նաեւ «աշխարհագրական նշում» հասկացության սահմանումը վերանայելու անհրաժեշտությամբ:

«Միգուցե մենք «Գավառի փախլավա» աշխարհագրական տեղանուն կունենանք, եւ դա կօգնի, որպեսզի այդ տարածքի փոքր եւ միջին ձեռնարկություններն ունենան իրենց արժանի մրցակցային առավելությունը եւ այդ աշխարհագրական տեղանվան անվանումով ապրանք վաճառեն, եւ միայն իրենք վաճառեն»,-պարզաբանել է նախարարը՝ նշելով, որ առաջարկվող կարգավորումները քննարկվել են համապատասխան մարմինների հետ:

Նշվել է, որ նախագիծը համահունչ է Եվրամիության օրենսդրությանը, որն արձանագրվել է նաեւ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) 231-րդ հոդվածի 1-ին մասում:

Նախագծին հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել:

Առաջին ընթերցմամբ քննարկվել եւ դրական եզրակացություն է ստացել ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ներկայացրել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը: Նախաձեռնության նպատակը Հայաստանի Հանրապետությունում սերմերի եւ տնկանյութի հավաստագրման պետական տուրքի եւ դրույքաչափի սահմանումն է: Ըստ այդմ՝ առաջարկվում է սերմերի եւ տնկանյութի հավաստագրման համար սահմանել 5.000 դրամ պետական տուրք:

ԼՈՒՐԵՐ

ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ՝ ՉԶԱԳՍԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ

Երեկ՝ սեպտեմբերի 7-ին, հրավիրվել էր Աժ պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նիստ: Քննարկվել է 2 օրենքի նախագիծ, որոնք ներկայացրել են Պաշտպանության նախարարության եւ ոստիկանության պատասխանատուները:

Արցախի Աժ-ից հայտնում են, որ ««Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է մարտական գործողությունների ժամանակ զինծառայողի զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող շահառուների շրջանակում ընդգրկել նաեւ զինծառայողի հետ գրանցված ամուսնության մեջ չգտնվող եւ համատեղ զավակ ունեցող անձը, իսկ զինծառայողից ամուսնալուծված, սակայն համատեղ զավակ ունեցող անձը չի համարվում շահառու:

Նախագծի ընդունման դեպքում շահառու կհամարվեն նաեւ զինծառայողի եղբայրը եւ քույրը, եթե տվյալ զինծառայողների մասով նախկինում որեւէ այլ շահառու գումար չի ստացել: Շահառուների բացակայություն առաջարկվում է համարել համապատասխան շահառուի ֆիզիկապես գոյություն չունենալը՝ ներառյալ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված կամ ծնողական իրավունքներից զրկված լինելը կամ համապատասխան կարգավիճակ չունենալը:

««Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» նախագծով նախատեսվում է ոստիկանությունում ծառայության անցնելու առավելագույն տարիք սահմանել 35 տարին՝ նախկին 30-ի փոխարեն:

Օրինագծի ընդունման արդյունքում կբարձրանա ոստիկանությունում մարդկային ռեսուրսների կառավարման եւ ոստիկանությունում ծառայության կազմակերպման արդյունավետությունը:

Աժ պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ օրինագծերը կներկայացվեն խորհրդարանի հերթական նիստի քննարկմանը:

ԵՂԱՆԱԿԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնից տեղեկացնում են՝ սեպտեմբերի 08-12-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Հանրապետության տարածքում 08-ին առանձին շրջաններում սպասվում է կարճատեւ անձրեւ: Ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում 15-19մ/վրկ:

Սեպտեմբերի 09-12-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ հյուսիս-արեւմտյան՝ 2-5մ/վրկ, ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը սեպտեմբերի 07-ին կնվազի 4-6, այնուհետեւ 09-12-ին աստիճանաբար կբարձրանա 5-8 աստիճանով:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 17 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, Եղվարդ ք., Գագարինի փողոց, 30 հասցեում գտնվող 329,5 ք.մ. բնակելի տուն, 3,9 ք.մ. կաթսայատուն, 33,9 ք.մ. թոնրատուն, 23,8 ք?մ? անասնաշենք, 63,8 ք.մ. մառան, 13,5 ք?մ? սանհանգույց, 5 ք.մ. /10 խ.մ., 24,9 գծմ/ պարիսպ, 14,4 ք.մ. ծածկ եւ 0,145 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 31700000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Բաղրամյան փողոց, 21/1 շենք, 48 հասցեում գտնվող 62,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 26.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 26.10.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ՆԿԱՏԵԼՈՒ Է

ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ՝ ՑԵՄԵՆՏԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Առաջարկվում է ներկրվող ցեմենտի տուրքը նվազեցնել 5.000 դրամով՝ մեկ տոննայի համար սահմանելով 9.000 դրամ՝ 14.000 դրամի փոխարեն, իսկ ներկրվող կլինկերի համար տուրքը վերացնել: ԱԺ կայքի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է պատգամավոր Բաբկեն Թունյանը ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի սեպտեմբերի 7-ի հերթական նիստում, երբ քննարկվում էր իր եւ պատգամավոր Հովիկ Աղազարյանի հեղինակած ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Բաբկեն Թունյանի պարզաբանմամբ՝ օրենքի ընդունումը պայմանավորված է ցեմենտի տեղական արտադրությունը պաշտպանելու, ինչպես նաեւ ներմուծվող ու տեղում արտադրվող ապրանքների համար հավասար մրցակցային դաշտ ապահովելու անհրաժեշտությամբ: «Մեր նպատակը ոչ թե այն է, որ մենք տեղական արտադրողների համար գերարտոնյալ պայմաններ սահմանենք ու թույլ տանք, որ իրենք թանկ ցեմենտի հաշվին կարողանան շահույթ ունենալ, այլ ստեղծել մրցակցային վիճակ, որտեղ իրենք կունենան նաեւ մրցակիցներ, եւ դա որոշակի առումով կզսպի իրենց գերախորժակները, եթե այդպիսիք կլինեն, եւ նաեւ շուկայում կկարգավորվեն ե՛ւ որակը, ե՛ւ ծավալները, ե՛ւ գները»,- ասել է Բաբկեն Թունյանը:

Նախագծի ընդունման արդյունքում կճշգրտվի 2019թ. գործող կարգավորումը՝ համապատասխանեցնելով ցեմենտի շուկայում վերջին զարգացումներին եւ փոփոխված ելակետային պայմաններին: Կվերանականգնվի ցեմենտի շուկայի հավասարակշիռ մրցակային վիճակը՝ կանխելով շուկայի հետագա կենտրոնացումը, գների չհիմնավորված աճը:

Տեղական ընկերությունների համար խթաններ ստեղծելով՝ քայլեր կձեռնարկվեն արտադրողականության բարձրացման եւ ինքնարժեքի իջեցման ուղղությամբ:

Հարակից զեկույցում ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը ներկայացրել է Կառավարության դրական կարծիքը նախագծի վերաբերյալ:

Նախագիծն արժանացել է հանձնաժողովի դրական եզրակացությանը: Հանձնաժողովն ԱԺ խորհրդին կառաջարկի նախագծի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ ընդունելուց հետո՝ քսանչորս ժամվա ընթացքում:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Շենգավիթ, Մանանդյան փողոց, 1 շենք, 20 հասցեում գտնվող 51,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 21850000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն 1 թաղամաս, 21/31 հասցեում գտնվող 0,21 հա հողամաս:Լոտի մեկնարկային գինը՝59000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն 1 թաղամաս, 21/32 հասցեում գտնվող 0,3 հա հողամաս:Լոտի մեկնարկային գինը՝84010000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Դավթաշեն, Աղաբաբյան փողոց, 1/12 հասցեում գտնվող 3,1832 հա հողամաս:Լոտի մեկնարկային գինը՝ 487000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 74/2 հասցեում գտնվող 393,7 ք.մ. արտադրամաս, 38,7 ք.մ. արտադրամաս, 23,2 ք.մ. սանհանգույց, 44,3 ք.մ. պահեստ, 12,3 ք.մ. արտադրամաս, 43,5 ք.մ. պահեստ, 245,7 ք.մ. շինություն-ծածկ, 62,2 ք.մ. /124,4 խ.մ./ պարիսպ եւ 0,1982 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝67500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Վ.Անտառային փողոց, 124/15 հասցեում գտնվող 639 ք.մ. բնակելի տուն (ավարտվածության աստիճանը՝ 50-80%), 70,5 ք.մ. ավտոտնակ, 40 ք.մ. լողավազան եւ 0,16 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝716000000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝դասական եւ հոլանդական եղանակով, 26.09.2022թ.-ին, ժ.12:00-ին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում: Աճուրդի ավարտը՝ 26.09.2022թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է աճուրդի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

«ԿՀԱՆԴԻՊԵՆՔ ԱՆՏԱՌԻ ՏՆԱԿՈՒՄ»

Շուտով հայկական հեռուստաթեր կվերադառնա ամենասիրված եւ սպասված «Կհանդիպենք անտառի տնակում» 2-րդ եթերաշրջանը: Ի դեպ, սիրված հեռուստասերիալի նկարահանումները տեղի են ունեցել Լոռվա Քարինջ գյուղում:

ArmLur.am- ի հետ զրույցում սերիալի սցենարիստ Անի Մաղաքյանը պատմել է նոր մանրամասներ հեռուստասերիալի եւ դերասանական կազմի մասին:

««Կհանդիպենք անտառի տնակում» 2-րդ հեռուստասերիալն այս եթերաշրջանի ամենասպասվածներից է, որովհետեւ շուրջ մեկ տարի հեռուստադիտողը անհամբերությամբ սպասում է, թե երբ է այն կրկին եթեր դուրս գալու: Այս եթերաշրջանը տարբերվելու է առաջին եթերաշրջանից. այստեղ բոլորովին այլ պատմություն է լինելու: Ունենք նոր հերոսուհի, ում անունը Լիլիթ է. նրա դերը մարմնավորելու է դերասանուհի Մարիամ Ադամյանը: Լիլիթի կյանքն ու կենսակերպը շատ է տարբերվում իր հասակակիցների կյանքից, դեպքերի բերումով նա հայտնվում է Լեռնաբերդում եւ գյուղի սրտաբաց ու յուրահատուկ բնակիչների շնորհիվ սովորում է կրկին ապրել: Այս անգամ գլխավոր հերոսը առաջին եթերաշրջանից սիրված Մոսոն է՝ Կարեն Ճաղարյանը»,- ասաց նա:

Իսկ ինչ վերաբերում է առաջին եթերաշրջանի հերոսներին՝ Բենին եւ Իննային, ապա նրանց հետ, կարելի է ասել, պատմությունն ավարտվել է: Հերոսները հասան իրենց երջանկությանը, նրանք ամուսնացել են եւ երկրորդ եթերաշրջանի դեպքերի ժամանակ գտնվում են հարսանեկան ճամփորդության մեջ, փոխարենը կտեսնենք Նելլիին եւ Անուշիկին՝ Բենի հերոսի մորն ու քրոջը: Նրանց շուրջ նույնպես հետաքրքիր դեպքեր են ծավալվում:

Նշենք, որ այս եթերաշրջանում էլ գործողությունները կրկին զարգանում են Լեռնաբերդում: Նկարահանումները, ինչպես եւ նախկինում, անցել են Լոռվա Քարինջ գյուղում. իհարկե, կան նաեւ նկարահանումներ Երեւանում:

Սերիալում այս անգամ խաղալու են Միկան, Վարուժը եւ Հայկը, որոնք նոր հերոսներ են եւ նոր գույներ են ավելացրել արդեն սիրված նախագծին: Վարուժի եւ Հայկի կերպարները երկու ընկերներ են հարեւան «Բազմաշեն գյուղից (գյուղի անունը հորինված է), որոնք բախտի բերումով հայտնվում են Լեռնաբերդում ու սրտի կանչով ամեն անգամ վերադառնում այնտեղ: Միկայի կերպարը շատ եմ սիրում, թեեւ մի քիչ չափազանցված եմ նկարագրել, բայց յուրահատուկ ու հետաքրքիր կերպար է ստացվել, ինչը, կարծում եմ, Միկան ավելի է հագեցրել: Նախորդ եթերաշրջանից կլինեն Ջուլիա Եղշատյանը, Կարեն Ճաղարյանը, Ալինա Ավետիսյանը, Լիա Ջախարյանը, Ռոբերտ Հակոբյանը եւ այլն:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ (3)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Չեխովի փողոց, 39/2 շենք, 101 հասցեում գտնվող 35,9 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22300000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 26.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲիԷսԹի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ԻՐԱՎԻՃԱԿ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ սեպտմբերի 1-ի կառավարության նիստում հայտարարությունը ակադեմիական քաղաքի ստեղծելու եւ հանրապետության բոլոր պետական բուհերը Աշտարակ քաղաք տեղափոխելու մասին, պայթունավտանգ իրավիճակ է ստեղծել Երեւանի պետական բուհերում:

Մեր տեղեկությունների համաձայն՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն ամենեւին էլ չի կիսում վարչապետի եւ կառավարության նոր նախագիծը՝ բուհերի միավորման հետ կապված, եւ որպեսզի պատասխանատվությունն իր ուսերից գցի, նախարարը հանդիպումներ է փնտրում տարբեր համալսարանների ռեկտորների, պրոֆեսորների հետ եւ իր դժկամությունն է հայտնում՝ ասելով, որ նա եւս դեմ է եւ փորձում է ամեն կերպ պայքարել այդ նախագծի դեմ:

Բացի դա, գաղտնիք չէ Վահրամ Դումանյան-Արայիկ Հարությունյան հակամարտությունը: Ավելին՝ ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ այս վերջին շրջանում նրանց հարաբերություններն էլ ավելի են լարվել:

Ասել է թե՝ Վահրամ Դումանայնը ներքին պայքար է սկսել Նիկոլ Փաշինյանի կառավարության դեմ՝ փորձելով պատասխանատվությունը գցել կառավարության վրա, որպեսզի ինքը ջրից չոր դուրս գա: ArmLur.am-ը խոսեց նաեւ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի հետ՝ ճշտելու համար վերը նշված տեղեկությունները: Ի պատասխան մեր հարցադրմանը՝ նախարարը նշեց. «Այդ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՎԱՐՏԸ՝ 2023Թ.

2019թ. սեպտեմբերին մեկնարկած Ամարասի վանական համալիրի վերականգնման ծրագիրը այժմ գտնվում է իր վերջին՝ 3-րդ փուլում:

Վանական համալիրի վերականգնման աշխատանքների ընդհանուր ծավալը շուրջ 420 մլն ՀՀ դրամ է, որից այս պահին արդեն կատարվել է 276 մլն դրամի աշխատանք:

«ԼՈՒՅՍ» հիմնադրամից տեղեկացնում են, որ միայն 2022թ. ապրիլի 15-ից մինչեւ 2022թ. սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում Ամարասի վանական համալիրի վերականգնման աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպության կողմից իրականացվել են ընդհանուր առմամբ 174մ3 տանիքի բուսահողի քանդում եւ հեռացում, 174մ3 բնահողի մաղում, 258մ2 կոպատաշ պատերի քանդում եւ վերաշարում, 10 200 գծմ ներքին եւ արտաքին պատերի եւ շեպերի կարանախցում, 950 գծմ ինվենտարային փայտամածերի տեղադրում եւ քանդում, 2.42մ2 ջրհորդանների նոր տաշ ու շար կրաքարից, 17.6մ2 քարե աստիճանների նոր տաշ ու շար:

Հիշեցնենք, որ աշխատանքները վերահսկում է պատմամշակութային հուշարձանների վերականգնման մասնագիտացում ունեցող նախագծային կազմակերպությունը: Ընդհանուր ծրագրի ավարտը նախատեսվում է 2023թ. գարնանը:

Ծրագրի նպատակն է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները համալիրի լիարժեք օգտագործման համար՝ նոր շունչ տալով հայ ժողովրդի համար կարեւորագույն պատմամշակութային նշանակություն ունեցող հուշարձանին, որն այսօր կանգնած է Արցախի քրիստոնեական արժեքների պահպանման առաջնագծում:

● Սեպտեմբերի 9-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերոնիկան որոշում է մեռնել» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Սովորողը բնություններին չներկայանալու դեպքում ինչպե՞ս կարող է հետագայում այն վերահանձնել:

Սիդա Սարգսյան (20 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 4-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 կամ գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված լինելու կամ գիտելիքների ստուգմանը չներկայանալու դեպքերում, եթե դրանց առավելագույն թիվը երեքն է, սովորողը հանձնում է վերաքննություն՝հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ հաստատության մեթոդմիավորումների կազմած առաջադրանքների հիման վրա:

9-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ ավարտական քննություններից 1-3 (բանավորի դեպքում) կամ 1-7 (գրավորի դեպքում) միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը չորսն է, վերաքննություն է հանձնում իր ուսհաստատությունում (բացառությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 3 մայիսի 2012թ. N 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման եւ ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի» 20-րդ կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերով սահմանված քննական առարկաների) հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են նշված կարգի 22-24-րդ եւ 33-րդ կետերի պահանջներին համապատասխան:

12-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ հունիս ամսին նախատեսված քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը երեքն է, վերաքննություն է հանձնում իր ուսհաստատությունում հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են՝ նշված կարգի 32-35-րդ կետերի պահանջներին համապատասխան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 2021-2022 ուումնական տարվա սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում եւ ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է աշխատանքի անցնել ՀՀ արդարադատության նախարարությունում:

Վարդան Պետրոսյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ արդարադատության նախարարություն աշխատանքի անցնելու համար հարկավոր է մասնակցել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին եւ ճանաչվել հաղթող: Թափուր պաշտոնների եւ առաջիկա մրցույթների մասին տեղեկատվություն կարող եք ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հրապարակվող թափուր հաստիքների վերաբերյալ հրապարակումներից (http://www.csc.am/), Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքից (http://www.azdarar.am)/, ինչպես նաեւ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջից (http://www.moj.am)/:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ արդարադատության նախարարի անունից քաղաքացիների ընդունելությունն իրականացնում են նախարարի տեղակալները յուրաքանչյուր երկուշաբթի՝ ժամը 16:00-ից սկսած: Ընդունելության համար անհրաժեշտ է նախապես գրանցվել՝ զանգահարելով 010 59 40 37 հեռախոսահամարով, կամ հերթագրվելու համար դիմումը լրացնել էլեկտրոնային եղանակով՝ այցելելով e-hotline.az թեժ գծի կայք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Գեղարքունիքի մարզի բնակիչ 46-ամյա Սմբատ Սաֆեյանը իր վարած Volkswagen Golf մակնիշի ավտոմեքենայով Կորեայի ձորում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, մի քանի պտույտ շրջվելով, բախվել քարերին եւ մոտ 20 մետր առաջ ընթանալով՝ հայտնվել ձորակում: Վարորդը ստացել է թեթեւ մարմնական վնասվածքներ: Վթարի հետեւանքով, բարեբախտաբար, զոհեր չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.09.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: